# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 «14» սեպտեմբերի 2018 թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 68

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Գլաձոր համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:
4. Անհատույց օգտագործման իրավունքով ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար համաձայնություն տալու մասին:
5. Գլաձորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա 130 մ խողովակը օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Հայկ Ալեքսանի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:
7. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.002 հա հասարակական կառուցապատման հողը ուղղակի վաճառքով վաճառելու համար թույլտվություն տալու մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 08* — *«14» սեպտեմբերի 2018 թ.*

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 69-Ա

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 45-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 18.1-րդ կետում «հաշվառում ունեցող» բառերը փոխարինել «փաստացի բնակվող» բառերով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 08*** ***«14» սեպտեմբերի 2018 թ.***

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 70-Ն

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

***Գլաձոր համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.***

1. Պակասեցնել գործառնական դասակարգման՝
   11.01.02 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4891 /պահուստային ֆոնդ/ հոդվածից 4400.0 /չորս միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Ավելացնել գործառնական դասակարգման՝
   04.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4251 / շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում / հոդվածին 1500.0 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ և 4637 / դրամաշնորհ / հոդվածին 2000.0 /երկու միլիոն / ՀՀ դրամ:
   05.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ / հոդվածին 500.0 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
   04.02.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4251 / շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում / հոդվածին 400.0 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08

«14» սեպտեմբերի 2018 թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 71

### ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-686-րդ հոդվածներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գլաձոր խոշորացված համայնքը կազմված է երեք բնակավայրերից, ընդհանուր տարածքը կազմում է 13133 հա, համայնքի ղեկավարի աշխատանքի ընթացքում համայնքային տարբեր խնդիրների լուծման համար անհրաժեշտություն է առաջանում բնակավայրերի տարբեր հատվածներ այցելելու, մարզի տարածքում և մարզից դուրս աշխատանքային գործուղումների և հանդիպումների գնալու, իսկ Գլաձորի համայնքապետարանը որպես սեփականություն չունի տրանսպորտային միջոց՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Գլաձոր համայնքի ղեկավարին անհատույց օգտագործման իրավունքով ձեռք բերելու MERCEDES-BENZ C-180 մակնիշի, 48 AA 884 հաշվառման համարանիշի ավտոմեքենան՝ համայնքապետարանի կարիքների համար օգտագործելու համար և ապահովել վառելիքով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 08*** ***«14» սեպտեմբերի 2018 թ.***

# *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 72*

## ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ 130 Մ ԽՈՂՈՎԱԿԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

Թույլատրել Գլաձորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա ճնշումային պոլիէթիլենային խողովակից՝ D=90 մմ, PN=10 մմ, L=130 մ խողովակը օգտագործել Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 6-րդ փողոցում խմելու ջրի ներքին ցանցի ավելի լավ ելքի ապահովման և հիդրավլիկ հատվածների մեղմացման նպատակով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 08* *«14» սեպտեմբերի 2018 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 73-Ա

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացու դիմումը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Հայկ Ալեքսանի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.06 հա / կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0035/ վարելահողը փոխադրելու բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, բնակելի տուն կառուցելու համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

*08914325*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 08* *«14» սեպտեմբերի 2018 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 74

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.002 ՀԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Թույլատրել Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 33-րդ փողոցի 4-րդ փակուղի թիվ 5 հասցեում գտնվող հասարակական նշանակության կառույցին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.002 հա հասարակական կառուցապատման /կադաստրային ծածկագիր՝ 10-015-0073-0022/ հողը ուղղակի վաճառքով վաճառելու Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի բնակիչ Կարեն Մայիսի Մանասերյանին՝ տարածքի բարելավման նպատակով:
2. Վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ